

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ՊԱՐԵԳԻՆ Բ.
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ
ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԱԿԵՏԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ**

(7 ապրիլի, 2021 թ.)

Սուրբ Աստուածածնի Աւետման տօնը պետական տօնակարգում հաստատուած է որպէս Մայրութեան, գեղեցկութեան եւ սիրոյ տօն: Այս օրը մեր եկեղեցիներում կատարում ենք օրհնութեան կարգ մայրութեան բերկրանքին սպասող կանանց համար՝ մաղթանքով, որ Աստուած շնորհաշատ զաւակներ պարգեւի եւ լիառատ պահի սէրն ու համերաշխութիւնը ընտանեկան հարկի ներքոյ: Հոգենորոգ տօնի առիթով հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում բոլորին, ի մասնաւորի՝ մայրութեան բերկրանքին սպասող կանանց:

Այսօր մեր սուրբ եկեղեցիներից Աստուածածնի աւետման հրեշտակաձայն աւետիսն է հնչում. «Ուրախ եղիր, ո՛վ շնորհընկալ, Տէրը քեզ հետ է»: Փրկչի աշխարհ գալու բերկրալի լուրը, որն առաջինը լսեց Սուրբ Տիրամայրը, նորոգել եւ օրհնութեամբ է լցրել նաեւ մեր ժողովրդի կեանքը: Դարեր շարունակ այս լուսաբեր աւետիսով ոգեշնչուել եւ զօրացել է քրիստոնեայ մեր ժողովուրդը, իսկ մեր մայրերն ու քոյրերը, օրինակ ունենալով Սուրբ Կոյսին, նուիրագործել են իրենց կեանքը՝ ապրելով հաւատքով եւ առ հայրենին սիրով ու հաւատարմութեամբ:

Մեր ժողովրդի համար դժուարին այս օրերին Սուրբ Հոգու սփռփանքն ու Բարձրեալի զօրակցութիւնն ենք հայցում ազգիս բոլոր զաւակներին, ի մասնաւորի՝ արցախեան նոր պատերազմի կորուստների ու արհաւիրքների ցաւը կրող մայրերին, քոյրերին ու դուստրերին:

Աղօթում ենք, որ Տիրամօր բարեխօսութեամբ՝ հարուցեալ Փրկիչը խաղաղութիւն ու բարօրութիւն պարգեւի համայն աշխարհին, մեր երկրին ու հաւատաւոր ժողովրդին: Թող Տիրոջ հանապազ պահպանութիւնն ու շնորհները հովանի լինեն մայրութեան բերկրանքին սպասող կանանց, որ աստուածաշատութեան, հայրենանուիրումի ու ազգանուիրումի ոգով սնեն ու դաստիարակեն իրենց զաւակներին, եւ Աստուած բոլոր կանանց, մայրերին ու քոյրերին պարգեւի երջանկութիւն, բարօրութիւն ու ամենայն բարիք, այսօր եւ միշտ. ամէն: